ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԺՈՂԿՈՄՍՈՎԵՏԻՆ ԿԻՑ ՊԵՏԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ (ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆ)

ԳԻՏԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԻ ԺՈՂՈՎԱԾՈՒ

Երևան № 1 1941 թ.

Վ. ՍՏԵՓԱՆՅԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՆՐԱ ՄԵՐՁԱԿԱՅՔԻ ԵՐԿՐԱՇԱՐԺՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՊԱՏՄԱԿԱՆ ՆՅՈՒԹԵՐԸ ՄԱՏԵՆԱԴԱՐԱՆՈՒՄ.

Հայկական և Անատոլիական լեռները Կովկասյան լեռնաշղթայի հետ միասին հանդիսանում են Եվրոպա-Ասիական կամ այսպես կոչված Միջերկրական ծովի (Средиземноморский) *երիտասարդ արագոնիկ ակտիվ շերտի այն հանգույցը, որը այդ շերտի արևմտյան Ալպյան գոտին միացնում է Միջին Ասիայի և Հիմալայան լեռների արևելյան գոտիին։*

Ըստ Մոնտեսսյու դե Բալլորի (Bernard Montessus de Ballore *1851—1923*) *հաշվումների՝ աշխարհի բոլոր երկրաշարժների 53,5 տոկոսը կենտրոնացած է նշված շերտում և 41,08 տոկոսը խաղաղ օվկիանոսյան կամ՝ այսպես կոչված հնդկա-ճապոնամալայան շերտում։*

Գտնվելով Եվրոպա-Ասիական գոտու ամենաակտիվ երկրաշարժային հանգույցներից մեկում, Հայաստանը և ընդհանրապես Փոքր Ասիան ու Անդրկովկասը դարեր շարունակ բազմիցս ենթարկվել են երկրաշարժների ահեղ ցնցումների, որոնք երկրին պատճառել են մեծ ավերածություններ ու աղետներ։

Բազմաթիվ անգամներ ավերակների կույտի են վերածվել Հայաստանի, Անդրկովկասի ու Փոքր Ասիայի խոշորագույն քաղաքները, որոնց թվում Երզնկան, Դվինը, Անին, Դարալագյազը, Շամախին, Թավրիզը, Երևանը, Վանը և այլն։

Երկրաշարժների ավերածությունները իրենց արտահայտությունն են գտել, ժամանակի հայ պատմիչների աշխատություններում, ժամանակագրություններում և գրիչների հիշատակարաններում, որոնք՝ իր ժամանակին չկարողանալով այլ բացատրություն տալ հանկարծակի վրա հասնող այդ սարսափելի աղետներին՝ համարում էին այն՝ որպես պատիժ՝ իրենց «ծուլացյալ մեղքերի համար»։

1840 թվի Արարատյան կատաստրոֆիկ երկրաշարժը իր վրա բերեց մի շարք գիտնականների ուշադրությունը։

Գերմանացի ճանապարհորդ Մորից Վագները մի քանի օր թաչատուր Աբովյանի ուղեկցությամբ անց է կացնում Արարատ լեռան լանջին, որտեղ կործանվել էր Ակռի մեծ ու հարուստ գյուղը իր բոլոր բնակիչներով, և ուսումնասիրում է երկրաշարժի պատճառները։

Այդ երկրաշարժը գրավում է նաև գիտնական Աբիխին, որը սկսում է ուսումնասիրել Կովկասի և Հայաստանի երկրաբանական շերտավորումը, նրանց տեկտոնիկ գծերը, միաժամանակ հավաքում է երկրաշարժների վերաբերվող փաստեր, նյութեր՝ ոչ միայն Կովկասի, այլ և հարևան Փոքր Ասիայի, Պարսկաստանի նկատմամբ՝ աշխատելով պարզել նրանց կապն ու փոխազդեցությունը։

19-րդ դարը հանդիսացավ ընդհանրապես սեյսմոլոգիական գիտությունների՝ խրոնոլոգիական, աշխարհագրական, շրջանային և պատմական կատալոգների զարգացման դարաշրջան։

Պերրեյը (Alexis Perrey 1807—1882) Ֆրանսիայում, Մալլին (Mallet 1810—1881) և ապա սեյսմոլոգիայի ակնառու դեմք Միլնը (John Milne 1850—1913), Անգլիայում, Ռոսսին (Rossi, Michele Stephano, 1834—1898) և Մերկալլին (Mercalli 1850—1913) Իտալիայում, Օմոռին (Fusakichi Omori, 1868—1923) Յապոնիայում, Գալիցինը Ռուսաստանում, Ֆուկեն, Մոնտեսյու դե Բալլորը, Էդուարդ Զյուսը և ուրիշները բնագիտական այլ գիտությունների բարձունքին հասցրին սեյսմոլոգիական գիտությունը։ Դրանցից Պերրեյն առանձին ուշադրություն էր դարձնում երկրաշարժներին վերաբերվող փաստերի հավաքմանն ու ուսումնասիրությանը։

Ռուսաստանում համեմատաբար ավելի ուշ է սկսվում պատշաճ բարձրության վրա դրվել այդ աշխատանքը։ Սակայն մի շարք կատաստրոֆիկ երկրաշարժներ Ռուսաստանի հարավային լայնածավալ սեյսմիկ տերիտորիայում՝ 1840 թվի Արարատյան երկրաշարժը, 1869 և 1872 թվի Շամախիի և 1869 թ. Իրկուտսկի երկրաշարժները, 1887 թ. Վերնիի երկրաշարժը, առիթ են տալիս երկրաշարժի խնդիրների լուրջ ուսումնասիրության նաև Ռուսաստանում։ Այդ ուսումնասիրությունները սկզբում արտահայտվում են Աբիխի, Օրլովի, Մուշկետովի և այլոց առանձին աշխատություններով։ Իսկ 1893 թվին լույս է տեսնում Ռուսաստանի լայնածավալ տերիտորիայի և մասամբ նրա մերձակա շրջանների երկրաշարժների պատմական կատալոգը. Ա. Օրլովի և Ի. Մուշկետովի աշխատությամբ (А. Орлов и И. Мушкетов „Каталог землетрясений Российской империи)։ Կատալոգը կազմվել է Մուշկետովի և հատկապես Օրլովի 20 տարվա հաստատ ջանքերով և ընդգրկում է 6-րդ դարից (նախ. քան մեր թվակ.) մինչև 1887 թվը երկրաշարժների մոտ 2500 դեպք։

Այդտեղ գրի են առնված նաև Անդրկովկասի ու Փոքր Ասիայի հատկապես 19-րդ դարու երկրաշարժների շատ արժեքավոր փաստեր։

Սակայն մինչև 19-րդ դարը քիչ դեպքեր են նշված և եղածները թերի են ու առանձին դեպքերում անճշտություններ են պարունակում թե ըստ ժամանակի և թե ըստ բովանդակության։

Այլ կերպ չէր կարող լինել, որովհետև երկրաշարժներին վերաբերվող պատմական փաստերը, գետեղված լինելով Հայկական, Վրացական, Պարսկական գրականության մեջ և մեծ մասամբ ձեռագիր գրականության ժամանակագրությունների, հիշատակարանների մեջ, մատչելի չէին Մուշկետովին և Օրլովին՝ թե լեզվի և թե այն պատճառով, որ այդպիսի գրականությունը գտնվում էր առանձին վանքերում, մասնավոր անձանց մոտ և այլն։

1902 թվ. Թիֆլիսում հրատարակվեց Հայաստանի և Փոքր Ասիայի երկրաշարժների անցյալին նվիրված գրեթե 1-ին խրոնոլոգիական աշխատությունը հայերեն լեզվով Կարապետ Կոստանյանի աշխատությամբ «Շարժի տարեգրություն Հայոց մեջ» վերնագրով, որը պարունակում է մինչև 19-րդ դարին վերաբերվող բավական փաստեր։

Հայաստանի երկրաշարժների պատմական անցյալով զբաղվել են մինչև Կ. Կոստանյանը նաև այլ հայ գրական գործիչներ, ինչպես օրինակ Ալիշանը, Ղուկաս Ինճիճյանը, որոնցից հատկապես վերջինս նշում է երկրաշարժների մոտ 16 դեպք Երզնկայում և մի շարք դեպքեր Արարատյան գավառում ու Հայաստանի այլ մասերում։

Սակայն այդ բոլորը թերի են և երբեմն կարևոր փաստերը լուսաբանված են ոչ անհրաժեշտ չափով։ Հետագայում Անդրկովկասի երկրաշարժների ուսումնասիրությամբ զբաղվում է Պրոֆ. Բյուսը, որը 1930 թվին իր „Очерк сейсмичности ЗСФСР“ աշխատության մեջ բերում է Անդրկովկասի խոշոր երկրաշարժների մի խրոնոլոգիա, 854 թվ. մինչև 1929 թիվը, որը սակայն մինչև 19-րդ դարը պարունակում է ընդամենը 17 դեպք։ Վերջին հարյուր տարում Անդրկովկասում տեղի ունեցող երկրաշարժները մշակվել և հրատարակության են տրվել նաև Պրոֆ. Բյուսի մի շարք այլ աշխատություններում, բայց և այնպես Հայաստանի երկրաշարժներին վերաբերվող շատ փաստեր մնում են դեռևս չուսումնասիրված։

Սոցիալիստական շինարարության հարաճուն վերելքը, հիդրոկայանների, գործարանների, բնակարանների և այլ շինությունների հսկայական թափը Հայկական Սովետական Սոցիալիստական Հանրապետությունում առաջ քաշեցին այդ կառուցումները սեյսմիկ ուժերի դեմ ապահովելու խնդիրը, որի անհրաժեշտությունը ակնբախ է Հայաստանի երկրաշարժային ակտիվ պայմաններում։

Դեռևս թարմ են բոլորիս հիշողության մեջ 1926 թվի Լենինականի, 1931 թվի Զանգեզուրի և 1937 թվի Երևանի երկրաշարժները, որոնք քիչ մնաց չպատճառեցին մեր սոցիալիստական հայրենիքին։

Երկրաշարժերի ակտիվությունը առիթ է տալիս 1931 թվին կազմակերպելու Հայաստանում 1-ին սեյսմիկ կայանը—«Երևանի սեյսմիկ կայանը», իսկ 1940 թվի 2-րդ կեսից Հայկական ՍՍՌ Ժողկոմսովետի որոշմամբ Գիտությունների Ակադեմիայի Հայկական ֆիլիալին կից կազմակերպվեց Անտիսեյսմիկ շինարարության բյուրո։

Հայաստանի բոլոր շրջաններում սեյսմակայուն շինարարության խնդիրների ճիշտ լուծման համար գործը պետք էր սկսել հիմքից, նախ ճշտել երկրաշարժային գոյություն ունեցող ռայոնացումը, որի համար բացի երկրաբանական և գեոֆիզիկական ինստրումենտալ արդյունքներից, անհրաժեշտ էին նաև ավելի շատ փաստեր անցյալի երկրաշարժերի վերաբերյալ, փաստեր, որոնց որոշ սխեմի վերածելով և երկրաբանական-գեոֆիզիկական արդյունքների հետ զուգադրման, բաղդատման միջոցով հնարավոր լինի ավելի ճշտորեն դրսևորելու Հայաստանի յուրաքանչյուր շրջանի սեյսմիկ ուժերի հնարավոր ինտենսիվությունը։ Ձեռնարկելով այդ աշխատանքին՝ մեզ հաջողվեց Հայկ. ՍՍՌ Ժողկոմսովետին կից Պետական Ձեռագրատանը (Մատենադարանում) ձեռք բերել բավական կարևոր նյութեր Հայաստանի և ընդհանրապես Անդրկովկասի և Փոքր Ասիայի երկրաշարժերի վերաբերյալ, նյութեր որոնց մեջ կան նաև այնպիսիները, որոնք չեն հրապարակված երբևիցէ և որոնք կարևոր արժեք են ներկայացնում երկրաշարժերի ինտենսիվության, տեղի և ուղղության որոշման համար։

Այսպիսի փաստեր կան սկսած 2—3 դարից, մեր թվականությունից առաջ՝ մինչև մեր օրերը։

Շատ պատմագիրներ, ժամանակագիրներ ու գրիչներ չեն կարողացել անտարբեր մնալ բնության այդ ահեղ արհավիրքի՝ երկրաշարժի նկատմամբ, երբ այդ արհավիրքը զուգադիպել է իր ժամանակին, որին անձամբ ականատես է եղել և շատ հաճախ կորցրել է իր մերձավորներին ու հարազատներին։

Ղուլղուլի Երզնկացին, Երզնկայի կործանիչ երկրաշարժերից մեկի ժամանակ, կորցնելով իր ծնողին ու երեխային, մի ամբողջ բանաստեղծություն է նվիրում երկրաշարժին, որի մեջ ողբում է և իր կորուստը այսպես՝

«Ծո Ղուլղուլ Երզընկացի.
Թեզի եղեր խել մի զիան.
Դու ես եղեր խեղճ ու գերի.
Հողն ես դրել մայրն ու տղան»։

Եվ որովհետև Հայ ժողովրդի պատմիչներն ու ժամանակագիրները, գրիչները եղել են Անդրկովկասի, և Փոքր Ասիայի գրեթե բոլոր տեղերում ուստի և տալիս են երկրաշարժի բավական առատ փաստեր, որոնք դետեղված են հարյուրավոր տպագիր ու ձեռագիր աշխատություններում, որոնցով հարուստ է Մատենադարանը։

Այն ժամանակ երբ Օրլովի և Մուշկետովի «կատալոգում» մինչև 7-րդ դարը (մեր թվագրության) Անդրկովկասի և փոքր Ասիայի վերաբերյալ պարունակվում է երկրաշարժի միայն մի դեպք—իսկ Կարապետ Կոստանյանի «Շարժի տարեգրության» մեջ չկա նշված և ոչ մի դեպք, Մատենադարանի ձեռագիր և տպագիր գրականությունից պարզվել է մինչև այժմ 17 փաստ, որոնք վկայում են այդ հնագույն շրջանի երկրաշարժերի մասին։ Մինչև 19-րդ դարը Օ.և Մ. կատալոգը պարունակում է նշված տեղի վերաբերյալ մոտ 50 դեպք, Կարապետ Կոստանյանի տարեգրությունը՝ մոտ 40 դեպք,

իսկ մեզ հաջողվեց Մատենադարանի գրականությունից հիշատակել 100-ից ավելի դեպքեր։

Օրինակ՝ ձեռագրերից մեկում, Էջմիածնի մի եպիսկոպոս՝ Դրիմում գտնվող իր մերձավորներին ուղղած նամակում ժանրաժասն նկարագրում է 1840 թվի Արարատի կատաստրոֆիկ երկրաշարժը, որի մեջ ի միջի այլոց նշում է նաև մի այսպիսի փաստ. երբ երկրաշարժի ցնցումից գուրս են փախչում, տեսնում՝ են թե ինչպես եկեղեցու խաչը եկեղեցու և զանգակատան հետ միասին տատանվում են դեպի արևելք և արևմուտք և եկեղեցու զանգակները ինքնահար զոզանջում են միջին ձայնով՝ կարծես անազանգելով վերահաս վտանգի մասին։ Սա մի կարևոր փաստ է, որով որոշվում է նշված երկրաշարժի ուղղությունը և բավական ճշտությամբ նաև նրա ինտենսիվությունը էջմիածնում։

Օրինակ՝ 1) 586 թվի երկրաշարժը Երկրորդ Հայքում. այդ երկրաշարժից կործանվել է Արփսոս քաղաքը, 2) 453, 1088, 1261 թվ. երկրաշարժները Վրաստանում, 3)454—460 թվ. կատաստրոֆիկ երկնաշարժները Կոստանդնուպոլսում, Կիզիկոնում և Թրակիայի այլ քաղաքներում, 4) 906 թվ. երկրաշարժը Դարալագյազում, 5) 1169, 1374, 1433, 1463, 1583, 1667 թվերի երկրաշարժները Երզնկայում, 6) 1282 թվ. երկրաշարժը Արճիշում, Խլաթում, 7). 1581 թվ. երկրաշարժը Վարագում և այլն, որոնք չկան հիշատակված երկրաշարժների կատալոգներում և չափազանց կարևոր արժեք են ներկայացնում երկրաշարժների ուսումնասիրության տեսակետից։

Մատենադարանի ավյալները պարզում են, որ բացի մինչև այժմ գիտության մեջ չարձանագրված վերոհիշյալ և այլ բազմաթիվ երկրաշարժներից՝ կան նաև հետաքրքիր լրացուցիչ ընութագրող տեղեկություններ մինչև այժմ քիչ լուսաբանված մի շարք երկրաշարժների մասին ինչպես օրինակ՝

1) 1648 թվի Վանի երկրաշարժը.

2) 1679 թվի Երևանի երկրաշարժը.

3) 1779 թվի Թավրիզի երկրաշարժը և այլն։

Վերոհիշյալ հարուստ նյութերը ներկայումս ուսումնասիրության են ենթարկվում ՍՍՌՄ Գիտությունների Ակադեմիայի հայկական ֆիլիալի անտիսեյսմիկ շինարարության բյուրոյի կողմից և ժանրաժասն՝ուսիստեմատիկ մշակված կերպով կոպագրվեն հատուկ աշխատության մեջ։ Այժմ, իբրև նմուշ, տպագրում ենք մի միայն տողերը բերվող գրիչ Գրիգոր Երևանցու հիշատակությունը. Երևանի 1679 թվի երկրաշարժի մասին.—

«Եւ ի յամուր եպիսկոպոսութեան սորա եղև ասպուածատատ բարկութիւն ի գաւառս Արարատեան՝ ի թուականութեան հայոց՝ ՌՃԻԸ (1679) յունիս ամսոյ. Դ, յաւուրն չորեքշաբթի, մինչ ոչ էր հասարակեալ օրն՝ Հնչեաց երկիր և դղրդեցաւ արարածք. Դողմանի լեալ երկիր բոլոր. շարժեաց յօդախառն սատանայն մինչ ղի տեսողաց անյոյս թեացեալ ի կենաց կենցաղոյս. զվերջին աւուրս մատածելով, եթէ լրումն երկրի իցէ աւուրս այս, որ և թուէր թէ ոչինչ գոյր պակաս յայնմանէ։ Բայց ի խնամն ասուածոյ դարձյալ հաստատեաց ի կայանս իւր ամենայն շրջակայ արարածք. վասնզի երկիր մեծարձակ պատառեցաւ. վէմք հատեալ ծբեռնս ծբեռնս լեալ թաւալեալ ի ծորակս և ի հովիտս լցուեցան. զլուսին եւ զարեգակն մթացեալ գիշերեցան ի փոշոյ հողոցս ջուրք համօրին արիւնագունեալ խառնակեցան. աղբերակունք ի ոսմանեալ ընթացիցն մոլորեցան. տունք ասուածոյ հատատաշէնք՝ եւ արքայակազմ եկեղեցիք ի հիմէ տապալեալ քակտեցան. պողոտայք յոլովագնացք քարակուտս լեալ խափանեցան ի յընթացից մարդկանց շէնք և շինուածք հնոց և նորոց խապտտ կործանեցան ի հիմանց։ Եւ մարդք անթիւք և անհամարք ի ներքոյ տան մեռան։ Եւ ոմանք որք ունէին զտեսարս՝ եա երկուց և երից աւուրց հանէին ի տակէ հողից հանդերձիւք իւրեանց առանց քահանայի և կարգի կատարման ամփոփէին ի հողս. եւ որք ոչ ունէին ոք սրտացաւ եթէ հանէր, դեռ կայ յայնմ տեղւոջ ուր հանգուցեալ է։ Մինթէ միւս անգամ նորոգօղն Քրիստոս նորոգեսցէ յաւուր դատաստան իւրոյ։ Ով կարէ պատ-

մել զաղէտ և զկսկիծն զոր տեսաք աչօք մերովք։ Զբժիշկն ամենից բժշկեսցէ զվիրավորեալսն ամենայն։ Ի յաւուր լեառն Մասիսէ մինչև ի բլուրն Շամիրամա խաղաւ քակեաց, եւ մեծ աւերումն եղև. բայց ի գլուխ կաթուղիկեաց հանուրց եկեղեցեաց, լուսաւորչաշէն բարձրագուժրեթն Էջմիածին միայն մնաց հանդերձ Գայիանաւ եւ Հռիփսիմէիւն ի պարծանս ազգիս մերոյ, իսկ զձորակն Այրեվանից առաւել եղև աւերումն և քակտումն. վասնզի է ամենայն շինուածք ի մեջ խոր ձորին և շուրջ բոլորաւն վէմք անադին. եւ յորժամ շարժեաց շուրջանակի՝ թաւալեցան ամենայն դիմաց՝ և լցան վանքն ամենայն մինչ զի ոչ երեւիր նշմարաւք շինութեան. բայց միայն կուտոցս քարի էր որք տեսողացն զարհուրեալ դողային, ըռանք և ճանապարհք ամենայն խափանեցան, և թե կամէին կերակուրս հոգեպատս առնել, յուսով և թեկամբ բարձեալ արսիթերս գնային, վասն զի կարի դժուարացեալ էր, և ամենայն կահիւք պակասեալ՝ ոչ գոյր տեղի ազատից. և ոչ տեղի ընակութեանց մարդկան. բայց քարակառակառ միայն, և ոչ մնաց քար ի վերայ քարի, ոչ ի եկեղեցիսն և ոչ ի յայլ շինուածս որպես ասէ տէրն. մի մնասցէ քար ի վերա քարի որ ոչ քակտեսցի. և զայս կատարեցաւ լիապէս յայսմ ժամանակի. և մնաց անապատ և ամայի զի ոչ գոյր հնար. և ոչ եթէ ոք ըղձայր գնալ երկրապագութեան՝ ոչ կարէր և հաւատաւոր երկիրպագողքն ևս արգելեալ մնային առաջեալ սրտիւ և յաւուրս շարժման Ստեփաննոս Բարունին էր մայրաքաղաքն Երևան. ի յանապատն սուրբ և հասարակաց ճաշու աղօթս կատարէին հանդերձ միաբան ուխտիւն. յայնմ ժամու շարժեաց և քակտեցաւ եկեղեցին. էառ զտակս զեպիսկոպոսն զՍտեփաննոս և զքաջ հռետորն և անտի փոխեցաւ առ Քրիստոս»։

Ձեռագիր նո 1512, հիշատակարան
Գրիչ՝ Գրիգոր Երևանցի.

Մատենադարանում երկրաշարժի վերաբերյալ եղած անապատ փաստերը պետք է օգտագործվեն մեր ինտենսիվիկ շինարարության բյուրոյի պրակտիկ աշխատանքների ընթացքում։